ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԳԱՂԹԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ

«Հայրենիք»ի թղթակիցը Թեհրանէն կը հաղորդէ Սեպտ. 5 թ. գրութեամբ, թէ Խորհրդային Միութեան Իրանի դեսպանատան Հիւպատոսական բաժինը պաշտօնական ազդով յայտարարած է, թէ Իրանահայերու ներգաղթը դադրեցուած է:

Այս դադարեցման պատճառն է՝ «Իրանի կառավարութիւնը, հակառակ իր նախկին որոշումների, հրաժարուեց հայերի իրանեան հպատակութիւնից ելնելը ձեւակերպել և թոյլատրել նրանց մեկնումը Սովետական Հայաստան»:

«Նկատի առնելով այս հանգամանքը, ՍՍՌՄ-ի Իրանի դեսպանատան հիւպատոսական բաժինը հարկադրուած է դադրեցնել Իրանահայերի ընթացիկ տարուան ներգաղթի աշխատանքները»:

Թղթակիցը կը շարունակէ.—

Անցեալ տարի, 1946 թուին, Իրանահայերից Ս. Հայաստան ներգաղթեցին 21,000 հոգի, չնայած սկզբում յայտարարուած էր, որ ընդամէնը 16,000 հոգի պիտի տարուին, սակայն ի նկատի առնելով դիմումներն ու խնդրանքները, և Իրանահայ գիւղացիների տնտեսական ծանր վիճակը, Հայաստանի կառավարութիւնը ընդառաջելով՝ 5000 հոգի աւելացրեց վերոյիշեալ թուի վրայ:

Այս տարի ևս, նախորդի նման, յայտարարուած էր թէ 20,000 հոգի պիտի ներգաղթէն, սակայն բանակցութիւններ էին տարւում 30,000 հոգու բարձրացնել այդ թիւը. Հայաստանի կառավարութիւնը տրամադրութիւն էր ցոյց տալու համաձայնելու: Արձանագրուած ներգաղթողները, մեծ մասամբ գիւղացիներ, անհամբեր սպասում էին ներգաղթելու օրուան. որոշ շրջաններ, ինչպէս օրինակի համար Ատրպատականի Ղարադաղ գաւառի բովանդակ հայ գիւղացիութիւնը, ծախելով ու լքելով իրենց ստացուածքը, եկել լցուել էին Թաւրիզի եկեղեցու և դպրոցի բակը. նոյնպէս է վարուել նաև Ուրմիայի, մասամբ նաև Սալմաստի հայ գիւղացիութիւնը: Հարաւային Իրանի Բուրվարի շրջանի եօթ գիւղերի 5132 անձ գիւղացիք, անցեալ աշնան հաւատ ընծայելով որոշ անհատների կարծիքների, ցանքս չեն արել, օրը օրին սպասելով ներգաղթի փրկարար կոչին: Նոյնպիսի սպասողական վիճակ են ապրում Հարաւ. Իրանի Փերիայի և Չհարմահալի հայ գիւղացիները:

Իրանահայ ազգային իշխանութիւնները և Ներգաղթի Կ. Կոմիտէն կանգնած էին տագնապալի կացութեան առջև՝ ի տես սովահար և աշխատանքը լքած հայ գիւղական բազմութիւնների: Շրշուկներ էին շրջում, որ Իրանի կառավարութիւնն այս տարի ամէն մի ներգաղթողի համար պահանջում է 250 ռիալ անցագրի փոփոխութեան վճար (մինչդեռ անցեալ տարուան ներգաղթողներից 5 ռիալ էր գանձուած...) և տարկւում է նաև, որ ներգաղթի հարցը Մէջլիսից (Խորհրդարան) պիտի անցնի: Եւ ահա այսօր այդ շշուկները դառն իրականութիւն դարձան, երբ Հիւպատոսարանն յայտարարեց վերոյիշեալ ազդը:

Հայ գիւղացիութիւնը, եկեղեցիների և դպրոցների բակերում ապաստանած՝ լաց ու կոծով լսեց որ այս տարի ներգաղթ չի լինելու:

Ներգաղթը նախ արգիլեց Թուրքիան, այսօր խօսւում է, որ Յունաստանն ևս արգիլել է: Այս երեւոյթը չարագուշակ նախանշան է մեր ժողովրդի ապագայի նըկատմամբ: Հայ ժողովրդի ներգաղթը և հայրենադարձման գործը տարկւյ է դառնում մեծ պետութիւնների քաղաքական հակամարտութեան: Արտաքին դիւանագիտական խաղերի բացասական անդրադարձումն է ներգաղթի արգելքը. հայ բազմաչարչար ժողովուրդը մի անգամ ևս ճաշակում է եւրոպական դաժան դիւանագիտութեան անողոք հարուածը: Վերջերս Հիւսիսային Իրանի նաւթի հարցը մթագնել է պետութիւնների փոխյարաբերութիւնը. այս պարագային տնտեսական-ֆինանսական և քաղաքական հրահանգները նուազ դեր չեն կատարում: Աստուածաշնչի բարոյախօսները, թէ ու թիկունք հանդիսանալով հայ ժողովրդի հանրածանօթ դահճին, վատ են տրամադրուած հայրենադարձման նկատմամբ. իրենց այս տրամադրութիւնը փոխանցւում է նաև իրենց ենթականներին և արգելքը լինում է մեզ համար այն, որ տանժում է հայը, արգիլւում է հայրենադարձը:

Սան Ֆրանսիսկոյի թուրք պատուիրակութեան անդամներին հիւրասիրող ու պատուող «հայեր» մեզ մօտ էլ անպակաս են, դժբախտաբար. հայեր կան, որոնք գործիք դարձած օտարների ձեռքին, ամենակատաղի և թունոտ պրոպագանդ են մղում ներգաղթի դէմ. այդպիսիները անձնական շահերով և գծուծ հաշիւներով ղեկավարուող անհայրենասէր տիպեր են, որոնք եսաւի պէս մի աման ապուրով վաճառքի են հանում իրենց եղբօրը:

Պարսիկ կալուածատէրերը ևս դէմ են ներգաղթին, ելնելով իրենց նիւթական շահերից. հայ գիւղացին յատկապէս՝ աւելի կուլտուրական տարր է, աւելի կաթնատու կթան կով. հասկանալի է որ նրա մեկնումը ձեռնտու չէ կալուածատիրոջ:

Այս տարի իրանահայութեան ներգաղթ չլինելու լուրը կայծակի արագութեամբ հասել է գիւղերը. դեռ ևս այս թղթակցութիւնը չաւարտած՝ լսեցի որ գիւղական շրջանների քահանաներն արդէն եկել են Թեհրան, ազգային իշխանութիւններին դիմելու և մի ճար խնդրելու համար: Ազգային սնտուկներում պատրաստի գումարներ չկան. գործադրկութիւնը պատերազմից յետոյ մեծ չափերի է հասել, հանրութեան տնտեսական վիճակը աննախանձելի է, հետեւաբար ստեղծուել է մի ահաւոր ողբերգութիւն. տասնեակ հազարաւոր գիւղացիներ զրկուած են տնից-տեղից, լծկանից և ցանքսից, ոմանք քնում են դուրսը, պատերի տակ, գիւղերում խոտ են ճարակում. կուտակուած բազմութիւնների մէջ սկսուել են տարափոխիկ հիւանդութիւններ:

Լսեցինք որ արդէն Թաւրիզի Առաջնորդարանը բանակցութիւններ է սկսել Ղարադաղի կալուածատէր աղաների հետ, մի կերպ հայ գիւղացիութեանը վերադարձնելու և կենտրոնացնելու փոքրաթիւ գիւղերի մէջ: Այդ գիւղացիները գաղթել էին քաղաք՝ նոյն կալուածատէրերի ճնշումների և ծանր տուգանքների ձեռից. հասկանալի է, ուրեմն, թէ ինչ պայմաններով պիտի վերադառնան: Բայց այդ վերադարձն իսկ խոշոր գումարների հետ է կապուած:

Արտասահմանի մեր բարեգործական միութիւնների և ունեւորների ուշադրութեան ենք յանձնում 55,000 իրանահայ գիւղացիների այս ծանր վիճակը:

Ձեռք առնուելիք միջոցների մասին մանրամասնութիւններ կը հաղորդեմ հետագային. ազգային հասարակական մարմինները դեռ ևս չուար վիճակում են:

Ա. ԴՈՒՄԱՆԵԱՆ

ASPAREZ | October 9, 1947